ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02

Հայաստանի Հնարապետության Արագածոտնի մարզպետարանում **28.03.2012թ.** տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Ս.Կարապետյան ՀՀ գյուղատնտեսության նախարար
Ս.Սահակյան ՀՀ Արագածոտնի մարզպետ
Ա.Արսենյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Մ.Առաքելյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հ.Գևորգյան ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Հ.Օհանյան ՀՀ ՏԿՆ ներկայացուցիչ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2012 թվականի գարնան գյուղատնտեսական աշխատանքների մասին
/ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյան /:

2. 2012 թվականի գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման ընթացքի, 2011 թվականի գյուղատնտեսության բնագավառում արձանագրված ցուցանիշների , մարզի հողօգտագործողներին պետական ծրագրերի շրջանակում մատչելի գներով ազոտական պարարտանյութ և դիզելային վառելիք տրամադրելու մասին
/զեկ.՝գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱԶԱՏՅԱՆ/:

3. Այլ հարցեր և հայտարարություններ:

Կից՝զեկուցողների զեկուցագրերը:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

--- Մարզպետը կարևորեց նմանատիպ հանդիպումները, քանի որ մարզը իր ուղղվածությամբ գյուղատնտեսական է:Նա մարզի գյուղացիական տնտեսությունների գործունեության համար կարևորեց նախագահի

հանձնարարականներով իրականացվող բոլոր ծրագրերն ու նախաձեռնությունները,նշելով ,որ թե պարարտանյութի ու դիզելային վառելանյութի ,թե' սերմացուների հատկացումը ,թե' նպաստավոր պայմաններով գյուղացիական վարկերի տրամադրումը արդեն իսկ իրենց դրական արդյունքը նկատելի են դարձրել:

ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս.Կարապետյան

--- Զեկուցողը ներկայացրեց այն բոլոր գերակա ծրագրերը, որոնք հնարավորություն կտան գյուղատնտեսության ոլորտում ցուցանիշները բարձրացնել: Դրանք են՝

1.Առաջին վերարտադրության գարնանացան գարու և եգիպտացորենի սերմացուներ տրամադրում:Նախարարը նշեց որ այս գործընթացը շարունակական է /մինչև 2014թ./

2. Կայուն զարգացման ռազմավարության մշակում

3.Պարենային անվտանգության հայեցակարգի կազմում

4.Վարկավորման տոկոսադրույքի սուբսիդավորում

5.Ներկրվող գյուղատնտեսական նշանակության նյութերը ԱԱՀ-ից ազատում

6. Կաթի մթերման հետ կապված աշխատանքների կարգավորում

7.Գյուղատնտեսական մթերքների վաճառքի /տոնավաճառի/ կազմակերպում

<u>Զեկուցողը ներկայացրեց 2012 թվականի առաջնահերթ ծրագրերը:</u>

1.Գյուղական համայնքներում կոոպերատիվների ստեղծում /Սպառողական կոոպերատիվներ/

2.Գյուղատնտեսական տեխնիկայի ներկրում

3.Գյուղատնտեսական ապրանքների արտահանում

4.Մատչելի գներով գյուղատնտեսական տնտեսություններին դիզելային վառելիքի և ազոտական պարարտանյութի տրամադրում

5.Սահմանված ժամանակացույցով գյուղատնտեսական կենդանիների պատվաստում

6.Մշակովի բույսեր պաշտպանություն /առավել վտանգավոր հիվանդությունների դեպքում/:

7.Մթերատվությունը և կաթնատվությունը բարձրացնելու համար գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորում

8.Տոհմային երինջների ներկրում

9. 35 հակակարկտային կայանների տեղադրում ,որից 15-ը նախատեսված է տեղադրել ՀՀ Արագածոտնի մարզում:

10.Նշվեց նաև պետական աջակցության ծրագրերի շարունակական լինելու մասին:

Ներկայացվեց նաև միջազգային ծրագրեր՝

1.Հեռագնա արոտավայրերը դարձնել մատչելի և օգտագործելի
2.<<Հայկական միրգ>> ծրագրի զարգացման վերաբերյալ
3.Տնկարանային տնտեսության հիմնադրման վերաբերյալ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս.Կարապետյան

--- Ապրիլի 1-ից կիրականացվի ցածր տոկոսադրույքով գյուղացիական վարկերի տրամադրումը:

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու.Ազատյան

--- Սերմացուների տրամադրման հարցում՝ մարզին աջակցելու վերաբերյալ:

Նախարարը և մարզպետը լսեցին նաև համայնքների ղեկավարների կողմից բարձրացված հարցերը,որոնք վերաբերում էին գյուղացիական տնտեսություններից մթերվող կաթի գնին,ոռոգման համակարգերի,սելավատարերի վերանորոգմանը,այլ խնդիրների և դրանց առնչությամբ կատարեցին իրենց պարզաբանումները:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ